ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գ. Սեդրակ Մանդինեանը գրում է մեզ հետևեալ նամակը. «Շատ անգամ ընթերցողը ոչ ժամանակ և ոչ ցանկութիւն ունի ստուգել լրագրութեան մէջ յայտնած մտքերը. Մի երկու խօսքով մենք ցոյց կը տանք, թէ «Մշակը» իր ընթերցողների գլխահաւանութեամբ ինչպէս ի չար է գործ ածում մեր վերաբերութեամբ. Նորերս Ասիացին մեզ մեղադրում է, իբր թէ «լեզուի առանձնութեան» փոխարէն մենք գործ ենք ածել «լեզուի խնդութիւն»—մենք խօսել ենք «ժողովրդական բանաստեղծութեան մասին» և ոչ թէ «լեզուի առանձնութեան մասին», ինչպէս որ Ասիացին իր ընթերցողին մոլորեցնում է և մենք «լեզուի խնդութիւն» խօսքը բնաւ գործածած չունենք,—այս էլ նրա երկրորդ փորձ մոլորեցնելու համար. Իսկ մնացած քլչոցներն ու եզրակացութիւնները, յոյս ունենք Ասիացին կիմանայ, թէ ուրեմն ում պէտք է վերաբերէ.» Նախ պ. Սեդրակ Մանդինեանցին կը պատասխանենք, որ Ասիացու ֆելիետոնում բոլորովին քլչոցներ չը կային, նա երևի այդ քլչոցները երազումն է տեսել. իսկ ուրիշ կողմից կասենք որ նրա գրվածքից բան չենք հասկանում. Ահա ինչպէս ասված է «Փորձի» փետրվարի տետրակի մէջ տպված նրա երևելի մանկավարժական յօդուածում. «Այսպիսի ոտանաւորներ շատ կարող ենք բերել, բայց ոչ մէկ տեղ ժողովրդական բանաստեղծութեան այն բազմագոյն շաղակրատութիւնները, խնդութիւնները, որ այնքան յարմար է մանուկին, չենք տեսնիլ.» Արի ու հասկացիր, թէ ինչ է ասում երևելի մանկավարժը. եթէ լեզուի խնդութիւնների վրա չէ խօսում, ուրեմն այդ ինչ խնդութիւններն են, որոնք այդքան յարմար ու օգտաւէտ են մանուկների համար. Ահա մի նոր և երևելի մանկավարժական միտք, որ խնդութիւնները օգտաւէտ են մանուկներին.... Մի՞թէ խելքը գլխին մարդը կարող է այդ տեսակ յիմարութիւններ գրել.

—

Ստացանք պ. Տիգրան Տէր-Օհանեանցից, Պարսկաստանի Սպահան քաղաքի հայ հասարակութիւնից յօգուտ Վանի սովատանջների հաւաքված, և Թէհրան պ. պ. Թումանեանց եղբայրների առևտրական տան վրա ուղարկված 130 թուման պարսից դրամ, որը ռուսաց փողի վերածելով, լինում է 479 ր. 5 կ.:

—

Լսում ենք որ ԹԻՖԼԻՍԻ հայոց թատրօնական կօմիտէտի մէջ մնացին միայն երկու անդամներ պ. պ. Ամատունի և Յովհաննէսեանը. Մնացածները հրաժարական տուեցին. Արդեօք երկու անդամներ կարող են կօմիտէտ կազմել. կարծում ենք որ չեն կարող. Այդ պատճառով հարկաւոր կը լինէր որ հիմնադիրները, կամ նուիրատուները ժողովվէին, հաշիւ պահանջէին երկու պարոններից և նոր կօմիտէտ ընտրէին. Զարմանալի ազգ են հայերը. որքան ժլատ են նրանք, նոյնքան և անհոգ են դէպի մի անգամ տուած փողերի գործադրութիւնը. Թիֆլիսի հայ հասարակութիւնը կազմեց կօմիտէտ, տուեց 8000 րուբլ, իսկ այժմ այլ ևս չէ հետաքրքրվում թէ ինչ է լինում կօմիտէտի հետ.

—

Լսում ենք որ կովկասի ընդհանուր ֆրանսիական հիւպատոս նշանակվում է պ. Լուի դէ-Կուտուլի, որ մօտիկ ազգական է «Temps» լրագրի այժմեան խմբագիր Շարլ դէ-Կուտուլիի հետ. Ինչպէս յայտնի է հայ հասարակութեան Շարլ դէ-Կուտուլի մի առանձին համակրութեամբ է վերաբերվում դէպի հայոց ազգութիւնը, որի մասին նա մօտ 10 նամակներ գրեց երկու տարի առաջ, երբ նա դեռ խմբագիր չ'էր, այլ եկել էր կովկասի պատերազմական բեմը ինչպէս «Temps» լրագրի թղթակից. Լուի դէ-Կուտուլի յայտնի է իր առանձին համակրութիւններով դէպի ռուսաց ազգը, որ նա արտայայտեց, երբ նա կատարում էր նորազատ սլաւօնական գաւառներում Ֆրանսիայի քաղաքական գործակալի պաշտօն.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՆԴԻՐԸ

Լօնդօնից գրում են լրագիրներին հետևեալը:

Վերին պալատում շարունակվում են վիճաբանութիւններ ադրէսի մասին: Իռլանդիայի և Աւգանիստանի վրա խօսելուց յետոյ Գրէնվիլ անցնում է արտաքին գործերին և ասում է թէ կան շատ նշանաւոր խնդիրներ, որոնց վճռելը պահանջում է հաստատամտութիւն, մեծ զգուշութիւն և բոլոր պետութիւնների համերաշխ գործողութիւն: Գօշէնի միջոցով անգլիական տէրութիւնը ցանկանում է հասնել Բեռլինի դաշնագրի չիրագործված յօդուածների շուտափոյթ կատարելուն, որ չը կարողացաւ անել Լայարդ իր առաջադրութիւններով: Սորան վերաբերվում են Յունաստանի և Չէրնօգօրիայի սահմանների խնդիրը և Հայաստանի խնդիրը: Բեռլինի կօնգրէսի չը կատարված վճիռների թւում գտնվում են և Թիւրքիայի նահանգների օրգանական կանոնադրութիւնները: Այդ տեսակ կանոնադրութիւնը արդէն գծագրված է: Այդ կանոնադրութիւնների ընդունելը առաջ կը բերի բազմաթիւ լաւ հիմնարկութիւններ, ինքնավարութիւն և իրաւունք սեփական որոշմամբ իրանց հարկերը հաւաքելու և կարգադրելու, որ և միջոց կը տայ Թիւրքաց նահանգներին ձըգտել բաղդաւոր ապագային և մեծ օգուտներ կը տայ Եւրոպային: Անգլիական պարլամենտում նկատվեցաւ որ Հայաստանի դրութիւնը սարսափելի է: Մինչև այժմ ոչինչ չը կատարվեցաւ ոչ Բեռլինի ոչ էլ Կիպրոսի դաշնագրի զօրութեամբ: Բեռլինի կօնգրէսի որոշումները իրագործելու համար, ասեց Գրէնվիլ, հարկաւոր է բոլոր պետութիւնների համաձայնութիւն և այդ պատճառով ուղարկված է ամեն տեղ մի շրջաբերական այդ խնդրի մասին և նոյն շրջաբերականի պատճէնը ուղարկված է և Բ. Դրան: Հէնց որ այդ կը կատարվի, դօկումէնտները կը ներկայացվեն պարլամենտին: Գրէնվիլ ասեց, թէ գոհ է պետութիւնների պատասխաններից և կարծում է որ Բ. Դուռը շատ թոյլ ընդդիմադրութիւն կը ցոյց տայ եւրոպական պահանջներին: Ադրէսի նախագիծը ընդունված է:

ԹԻՒՐՔԻԱ

«Голосъ» լրագրի մէջ տպված է հետևեալ առաջնորդող յօդուածը:

Վերջապէս սկսեցին ուղևորվել Կ. Պօլիս այն պետութիւնների ներկայացուցիչները, որոնք հետաքրքրված են Թիւրքիայում կատարվող գործերով: Անցեալ շաբաթ ուղևորվեցաւ Կ. Պօլիս ռուսաց դեսպանը, անգլիական դեսպան Գօշէն նոյն բանը արաւ, միայն նա փոփոխեց իր ճանապարհորդութեան նախագիծը. առաջ Գօշէն պէտք է գնար Վենետիկ և Տրիեստ, իսկ այժմ նա կայցելէ Փարիզ և Վիէննա ֆրանսիական և աւստրիական արտաքին գործերի մինիստրների հետ խորհրդակցելու համար, այնուհետև կուղևորվի Տրիեստ և Կ. Պօլիս:

Ճանապարհորդութեան այդ փոփոխութիւնը բաւական կուշացնի պ. Գօշէնի Կ. Պօլիս հասնելը, որ շատ ցաւալի է: Ինչքան շուտ կը սկսվի Անգլիայի ճնշումը Թիւրքիայի վրա, այնքան աւելի յոյս կայ, որ Թիւրքիայի մէջ անկարգութիւնները ծայրայեղութեան չեն հասնի:

Կ. Պօլսից ստացված լուրերից երևում է, որ գործը կարող է այդ ծայրայեղութեանը հասնել: Բացի Ալբանիայի մէջ վերջին ժամանակներում պատահած անցքերը, որոնց դէմ Բ. Դուռը անկարող է այնպիսի միջոցներ գործ դնել, որ երկրի մէջ կարգը և հանգստութիւնը վերականգնվի, ուրիշ նշաններ էլ են երևում, որոնք ապացուցանում են թէ Կ. Պօլսի կառավարութիւնը ինքը չը գիտէ ինչ է անում: Օրինակ հեռագիրը հաղորդեց, որ սուլթանը միջնորդել է Թագաւոր Կայսրի առաջ, խնդրելով Կումբրաւոյի սպանողի ներումն: Եթէ այդ լուրը ճիշդ է, նրա հաղորդած փաստը անօրինակելի է:

Մինչև այժմ պատահած այդպիսի գործերի ժամանակ առհասարակ մի կառավարութիւն միջնորդում էր միւսի առաջ, որի հըպատակները այդպիսի չարագործութեանը զոհվել էին: Իսկ այժմ մի պետութեան թագաւորը, որի հպատակը սպանող է, միջնորդում է մի ուրիշ պետութեան թագաւորի առաջ, որի հպատակը սպանվել է: Այդ գործը այնչափ անօրինակելի և անվայել է, որ երկու ենթադրութիւններ միայն կարելի է անել. կամ այդ լուրը սխալ է, կամ սուլթան Աբդուլ-Համիդ վախենում է պատժել Կումբրաւոյի սպանողին, որովհետև այդ չարագործը մահմետական է, իսկ սպանվածը քրիստոնեայ: Եթէ սուլթանը ճշմարիտ միջնորդել է չարագործի ներման համար, դրա պատճառը այն չէ, որ ինքը սուլթանը չարագործին ներողութեան արժանի է համարում, այլ որովհետև ինքը վախենում է իր ապահովութեան համար և իրան անզօր է համարում ֆանատիկոսներին զսպելու համար:

Այդպիսի միջնորդութիւնը ստորութեան վերջին աստիճանն է, որին կարող է հասնել եւրոպական թագաւորի տիտղոսը կրող մի իշխան: Այդ նշանակում է, որ սուլթանը խոստովանում է, թէ ինքը անկարող է կատարել այն պարտաւորութիւնները, որ իր վրա դնում է իր աստիճանը: Այն պետութիւնները, որոնք համոզվել են, թէ Բ. Դուռը անկարող է կատարել իր պարտականութիւնները, պէտք է շուտով այնպիսի միջոցներ գործադրեն, որպէս զի Եւրոպայի հանգստութիւնը չը խանգարվի: Շատ յարմար ժամանակ եղաւ լորդ Գրէնվիլից պետութիւններին ուղղված հրաւէրը Բ. Դրան վրա միջազգային ճնշում գործելու համար: Եթէ այժմ բոլոր պետութիւնները չեն ցանկանում այդ հրաւէրին հետևել, այնու ամենայնիւ միւսները պէտք է շուտով գործ սկսեն: Այս հանգամանքը ի նկատի ունենալով, ցաւալի է, որ ռուսաց դեսպան Նօվիկօվի Կ. Պօլիս հասնելուց յետոյ, բաւական ժամանակ կանցնի մինչև այնտեղ կը հասնի անգլիական դեսպան պ. Գօշէն:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

«Голосъ» լրագրի մէջ տպված է հետևեալ թղթակցութիւնը Թէհրանից:

Պարսկաստանը միշտ Պարսկաստան կը մնայ և երբէք նա քաղաքակրթված երկիր չի դառնայ:

1875 թուին Պարսկաստանը եւրոպացիների օգնութեամբ արևմտեան եղանակով փոստ հիմնեց: Գործը շատ լաւ էր գնում: 1877 թուին Պարսկաստանը միջազգային փոստային դաշնակցութեան մէջ ընդունվեցաւ: 1878 թուի 23000 թուման (թումանը 3 րուբլ է) փոստային եկամուտը 1879 թուին բարձրացաւ մինչև 32000 թուման և թէպէտ 1878 թուին 3000 թուման վնաս կար, 1879 թուին 2000 թուման զուտ եկամուտ ստացվեցաւ: Այնուամենայնիւ պէտք է զարմանալ, որ այդքան զուտ եկամուտ ըստացվեցաւ, որովհետև Պարսկաստանի մէջ նամակներ գրող մարդիկ քիչ կան և փոստը տեղափոխող ձիաններն էլ թանգ արժեն: Մի և նոյն ժամանակ, որքան ես յիշում եմ, 1879 թուին փոստը մի քանի անգամ կողոպտվեցաւ: Կորած իրեղէնների գները 10000 թումանի էին հասնում և բոլորն էլ ապահոված էին և թէպէտ կառավարութիւնը պարտաւորվեցաւ բաւականացնել տէրերին, բայց նրանց ոչինչ չը վճարեց: Աւելորդ է ասել, որ այդպիսի փաստերից յետոյ փոստային վարչութիւնը կորցնում է իր հաւատարմութիւնը:

Մենք միշտ երևակայում էինք, որ փոստը միակ հիմնարկութիւնն է, որ աջողվեցաւ Պարսկաստանի մէջ և որ նա երկարատև կը լինի: Իսկ գործից երևում է, որ պարսիկը միշտ իր հօր որդին կը մնայ: Ապրիլի 1-ին փոստը կապալով տրվեցաւ մի պարսկի որոշ գումարով և փոստային վարչութեան մէջ ծառայող բոլոր եւրոպացիները արձակվեցին իրանց պաշտօններից, որովհետև նրանք 32000 թուման եկամուտից չը կարողացան խնայել գոնեա 17000 թուման: Ի՞նչ հարկաւոր են ձեզ աթոռներ և սեղաններ, ասում են պարսիկները, մենք առանց նրանց էլ կարող ենք գործ կատարել: Դրանք զարդեր և աւելորդ ծախսեր են: Ձմեռը նոյնպէս չէ հարկաւոր, հասարակ սոսինձով էլ կարելի է բաւականանալ: Վերջապէս մեծ ռոճիկներ են տըրվում (մեծ կայարանի կառավարիչը 10 թուման էր ստանում), մենք դրա կէսով էլ կարող ենք միրզաներ (գրագիրներ) գտնել:

Ի՞նչ եղան դրանց հետևանքները: Առաջ Եւրոպայից Ռուսաստանի վրա մենք շաբաթը երկու անգամ թղթակցութիւններ էինք ըստանում, իսկ այժմ երկու շաբաթը մի անգամ հազիւ ենք ստանում, այնպէս որ այստեղ բնակվող եւրոպացիները խնդրեցին իրանց հիւպատոսներին որ իրանց նամակներն էլ հիւպատոսատան փօստով ուղարկվի: Իսկ պարսկաստանցի վաճառականները, չը հաւատալով փոստային վարչութեան մէջ ծառայող նոր անձինքներին, սկսեցին իրանց նամակները չարվադարների ձեռքով ուղարկել, որոնք Թէհրանի և Դաւրէժի մէջ եղած տարածութիւնը անցնում են 17 օրում, իսկ փոստը անցնում էր 12 օրում: Թէպէտ արագութեան մէջ մեծ զանազանութիւն չը կայ, բայց չարվադարներին մեծ գներ են վճարվում:

Թշուառ և ծիծաղելի է պարսիկ ժողովուրդը: Դատարաններ և օրէնքներ չը կան: Նահանգապետները կապալառուներ են, այնպէս որ դրանք նահանգների անկախ տէրեր են համարվում: Մաքսատունը, դրամատունը, հեռագրատունը, փոստը բոլորը կապալով են տըված: Ամեն բան ծախվում է, ամեն բան կապալով է տրվում:

Մտածեցին գազի լուսաւորութիւն մտցնել: Հրաւիրեցին եւրոպացիներին, մինչև կէսը գործարան շինեցին, իսկ յետոյ հաշւեցին, որ գազը թանգ կը նստի, վռնդեցին եւրոպացիներին, իսկ գործարանը փոքր առ փոքր աւերակ է դառնում: Մտածեցին ելէքտրական լուսաւորութիւն մտցնել: Բերել տուին մեքենաներ, երեք լապտերներ, մի երկու ամիս զուարճացան և թողին: Այժմ լապտերները վերցրած են և նրանց սիւների վրա փողոցային տղաները ակրօբատական շարժումներ են անում:

Այժմ մտադիր են եւրոպացիներ հրաւիրել մաքսատուն կազմակերպելու համար: Ես խորհուրդ կը տամ այդ գործը սկսողին գըլխաւոր պայման դնել, որ հասուցանելի բոլոր դրամը հիւպատոսներից մէկին յանձնվի, եթէ ոչ մի գեղեցիկ օր նրան կարձակեն և ոչ մի կօպէկ փող չեն տայ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մայիսի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է որ զինուորական դատարանը դատապարտեց Միխայլօվին և Սաբուրօվին կախաղանի, իսկ Տրօշչանսկուն տաժանակիր աշխատանքներին 20 տարով, Վէյմարին և Բերդնիկօվին նոյնպէս տաժանակիր աշխատանքներին 15 տարով, Լեվենտալին 10 տարով, Կալէնկինի կնոջը 15 տարով, Նատանսօնին 6 տարով, Չետնիկովի կնոջը 4 տարով, Մալինօվսկու կնոջը և Բուլանօվին դատապարտեց Տօբօլեան նահանգների մէջ կացութեանը: Դատավճիռը, նախ քան գործ դրվիլը, կը ներկայացվի կոմս Լօրիս-Մէլիքօվի քննութեանը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մայիսի: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ անցած շաբաթվայ ընթացքում Կայսրուհու առողջութեան մէջ ոչինչ էական փոփոխութիւններ նշմարելի չեղան:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. 15 մայիսի: «Берегъ» լրագիրը խափանված է 7 օրով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մայիսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 50 կ., երկրորդ 92 ր. 37 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 92 ր. 50 կ., Ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 226 ր., երկրորդ 220 ր., արևելեան առաջին 90 ր. 25 կ., երկրորդ 90 ր. 62 կ., երրորդ 90 ր. 62 կ., ոսկի 7 ր. 73 կ.: Ռուսաց 1 րուբլ Լօնդօնի վրա արժէ 25,50 պէնս, ռուսաց 100 ր. Փարիզի վրա արժէ 268 ֆր. 25 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը թոյլ է:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ